

ՆՈՐԱՇԵՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Նորաշենը կամ Նորակերտը, որն այժմյան Նախիջևանի ԻՍՍՀ Զուլֆայի շրջանի Նորաշեն գյուղն է, նշանակալից դեր է կատարել պատմական Հայաստանի Երնշակ գավառի մշակութային կյանքում: Այն գտնվում է Երնշակ գետի միջին հոսանքում, նույնանուն բերդի դիմաց փոված ընդարձակ ձորահովտի հյուսիսարևմտյան մասում:

Երնշակ գավառի գյուղերի տեղագրության ուսումնասիրությունը մեզ թույլ է տալիս այժմյան Նորաշենը նույնացնելու Ստեփանոս Օրբելյանի Պատմության մեջ Երնշակ գավառի կազմում նշված Նորակերտ գյուղի հետ, որը Տաթևի վանքին վճարում էր 12 դահեկան հարկ: Եթե հաշվի առնենք, որ հարկատու գյուղերի ցուցակը կազմված է առ ուշ, քան 10-րդ դարը՝ «Տաթևի ֆեոդալական վանքի հին վարչական բաժանման հիման վրա»<sup>2</sup>, ապա պետք է ընդունենք, որ Նորաշենի մշակութային կյանքը սկզբնավորվել է դեռևս X դ. վիժագիր և գրագիր աղբյուրներում այս գյուղը X—XIV դդ. անվանվել է Նորակերտ, իսկ XV դարից՝ Նորաշեն, Նորաշենիկ: Գյուղի գերեզմանատան XVI—XVII դդ. արձանագրություններում այն անվանվում է Նորաշեն, իսկ XIX դ. մի տապանաքարի արձանագրության մեջ՝ Նորաշենը թթու լինել մի երկուց գյուղից Երնշակա ըստ հին ցանկին, Նորակերտ և Նորաղբյուղ որոց առաջին հիշի Առաքել պատմիչ համանուն վտակավն և գուշակի ընդ մէջ Շոռթի և Ցղնայ գուշ: Սակայն նկատենք, որ

Ա. Դավրիժեցու պատմության մեջ՝ հիշատակվող Նորակերտ գյուղը ոչ մի առնչություն չունի Երնշակի Նորակերտի հետ, քանի որ այս Նորակերտը գտնվում է անմիջապես Երնշակ գավառի կենտրոնում, իսկ Ա. Դավրիժեցու նշածը՝ Գողթնում: Հետևապես, Ա. Դավրիժեցու պատմության մեջ հիշատակվող Նորակերտը, որը գտնվում է Շոռթից դեպի Ցղնա տանող ճանապարհին հանդիպող գետի վերին հոսանքում, ամենայն հավանականությամբ Գողթն գավառի Նորակերտ գյուղն է (այժմյան Օրգուրագի շրջանի Նիրգուղը): Ա. Սեդրակյանը ևս վրիպել է, կարծելով թե Նորաշենը պիտի լինի Ղ. Զահեկեցու հիշատակած Շահրունիս գյուղը<sup>5</sup>: Բանն այն է, որ Շահրունիսը ոչ թե Երնշակ գավառում է գտնվում, այլ՝ Շահապուհիքում<sup>6</sup> և այժմյան Շահրուզի շրջանի Քյանդ Շահրուզ գյուղն է<sup>7</sup>:

Պատմական աղբյուրներում շատ քիչ տեղեկություններ են պահպանվել ինչպես Նորաշենի X—XV դդ. մշակութային կյանքի, այնպես էլ պատմաճարտարապետական հուշարձանների մասին: Տեղում գրչագրված ձեռագրերի հաղորդած տվյալներից երևում է, որ Նորաշենը հայտնի է եղել ս. Գրիգոր, ս. Հովհաննես եկեղեցիներով, ս. Աստվածածին վանքով, սեփականացած կամ ս. Հովհաննես մատուռով, կամ ըրջով և այլ հուշարձաններով:

1 «Ստեփանոսի Սիւնեացեայն կոպոսի Պատմութիւն տանն Սիսականն», Ի լոյս ընծայեց Մկրտիչ էմին, Մոսկվա, 1861, էջ 377:

2 Ս. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, հ. 1, Երևան, 1957, էջ 323, Հ. Ութմազյան, Սյունիքը 9—10-րդ դարերում, Երևան, 1958, էջ 234:

3 Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1891, էջ 367:

4 «Պատմութիւն Առաքել վարդապետի Գաւրիժեցոյ», Վաղարշապատ, 1896, էջ 280:

5 Ա. Սեդրակյան, Հնությունք հայրենյացի գավառին Երնշակու, Վաղարշապատ, 1872, էջ 83:

6 Ա. Դավրիժեցի, էջ 427, Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 481, Գ. Հովսեփյան, Խաղրակյանք կամ Պոռչյանք հայոց պատմության մեջ, մասն Ա, Վաղարշապատ, 1928, էջ 49—53:

7 Ա. Ամազյան, Նյութեր Նախիջևանի հայկական պատմական հուշարձանների վերաբերյալ («Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 2, էջ 271):

11. Գրիգոր եկեղեցին, հավանաբար, կառուցվել է մինչև XII—XIII դդ. և պատմական ասպարեզից դուրս է եկել մոտավորապես XVI դ. կեսերին: Մեզ հայտնի աղբյուրներում այս եկեղեցու մասին միակ տեղեկությունը հաղորդում է 1357 թ. այնտեղ գրչագրված Ավետարանը կաղմող, ծաղկող ու գրչագրող Գավազանը: Ավետարանի հիշատակարանում նա նշում է, որ «գրեցաւ սա ի թուականութեանս Հայոց ՊՁ. (1357), ի գաւառիս Երնջակա, ի գեօղս Նորակերտ, ընդ հովանեաւ սուրբ Գրիգորիս՝ Նորաշենի մյուս եկեղեցին՝ ս. Հովհաննեսը, որը կառուցվել է գյուղի հյուսիս-արևմտյան կողմում գտնվող բարձրագիւր հարթութեան վրա, այժմ ավերակ է: XIX դ. 60-ական թվականներին նրա ավերակներում եղել է Ա. Սեդրակյանը և որն է հետևյալը. «Այժմու ծառաստանաց մեջ ընկած փոքրիկ վայելչաձև եկեղեցի մի եղած է, այժմ ավերակ. մնան միայն սեղանն և տանեաց կեսն. սեղանո շորս կողմով պատին մեջ թողված կան յոթն պատուհաններ, և ամեն մեկի մեջ մի մի խաչքար. նայելով խաչքարերի քանդակներին, բավական նուրբ են, իսկ արձանագրութիւններն շատ խակ ձեռին դործ: Արեւելյան հյուսիսակողման խաչքարի մի վերա տեսած արձանագրի թվականն միայն հանձն առինք օրինակել, որ է ՔԻ թ. 2174 (1485)»<sup>9</sup>, Ս. Հովհաննես եկեղեցու ավերակների աննշան հետքերից, շինութեան տեղում մնացած հատուկներ քարերի ու խաչքարերի տվյալներից ելնելով կարելի է ենթադրել, որ այս եկեղեցին ևս կառուցվել է մինչև XII—XIII դդ.: Հետագայում մի քանի անգամ նորոգված այս եկեղեցին Ի. Շոպենի այցելութեան ժամանակ արդեն բավական քայքայված վիճակում էր<sup>10</sup>:

Նշանավոր ուխտատեղի է եղել նաև Քրուսարիս վրա եղած «Կուսանաց» կամ ս. Հռիփսիմն մատուռը, որը ևս այժմ ավերակ է: Մատուռի ճարտարապետական տվյալները թույլ են տալիս այն թվագրելու XIV—XV դդ.:

Նորաշենի XIV—XVI դդ. մշակութային կյանքի մասին աղբյուրները լուրջ են: XVII—XVIII դդ. գրչագրված մի շարք ձեռագրերի (որոնցից մեկ տասնյակից ավելին հասել է մեզ) հաղորդած տվյալներով Նորաշենը XVII դ. ապրել է ծաղկման նոր շրջան և տեղի

ղպրոցի բարունի, մանրանկարիչ և գրիչ Կոզմա Նորաշենեկցու (XVII դ.) վկայությամբ դարձել է «գիւղաքաղաք Նորաշենի»<sup>11</sup>: Հենց այդ շրջանում էլ Նորաշենի հուշարձանների շարքում իր կատարած հոգևոր ու մշակութային դերով առանձնանում է ս. Աստվածածին վանքը, որը նշանավոր և կարևոր հուշարձան է նաև իր ճարտարապետությամբ: Այս գեղեցկատես հուշարձանը (նկ. 1), որը գտնվում է գյուղի կենտրոնական մասում, կառուցված է սրբատաշ բազալտով և կարմրերանգ տուֆով: Հուշարձանն ունի քառամույթ եռանավ բազիլիկայի հորինվածք, կազմված է ընդարձակ արտիդից, զույգ ավանդատներից ու դաշիճից: Այն ունի երկու մուտք՝ հարավային ու արևմտյան ճակատներում: Գահիճի շորս մույթների և հանդիպակաց որմերի որմնամույթների վրա նստած կամարները կրում են եկեղեցու երկթեք ծածկը: Միջին նավի կենտրոնում կանգնեցված է շորս ոչ բարձր, կլոր մույթերով զանգակատունը: Հուշարձանը ներքուսա բարձր է և լուսավոր: Արտիդը և ավանդատները լուսավորվում են արևելյան որմերի մեկական, իսկ դահիճը՝ ընդերկայնական առանցքի և արևմտյան ճակատի երեքական լուսամուտներով: Արևմտյան ճակատում կողային նավերի լուսամուտների բացվածքները նեղ են և ունեն կլոր պսակներ: Միջին նավի, ինչպես նաև եկեղեցու հյուսիսային ու հարավային որմերի երեքական լուսամուտներն ուղղանկյուն են և ունեն բավական լայն բացվածքներ:

Ս. Աստվածածին վանքի եկեղեցին XVI—XVII դդ. մի քանի անգամ վերանորոգվել է, որոնց ընթացքում էլ եկեղեցու արտաքին որմերում, մուտքերի բարավորների վերին մասերում տեղադրվել են մի քանի վիմագիր խաչքարեր: Մ. Ամբաստանը հենվելով Աբրահունիսի ս. Կարապետ վանքում եղած մի Աստվածաշնչի (գրչագրված 1641 թ.) հիշատակարանի հաղորդած տվյալների վրա, նշել է, որ ս. Կարապետ վանքին այդ ձեռագիրը նվիրած եղբայրները՝ նորաշենեկցի խոջա Մկրտիչը և խոջա Հանեսը 1663 թ. վերանորոգել են նաև ս. Աստվածածին եկեղեցին<sup>12</sup>: Մեկ ուրիշ աղբյուրի՝ ս. Աստվածածին եկեղեցու հովանու ներքո 1692—1695 թթ. Մովսես երեցի գրչագրած ձեռագրի տվյալներով՝ Քթուին ՌՃԼԶ (1687) ամի հիմն արկին (վերանորոգեցին— Ա. Ա.) բաղում աշխատութեամբ և վշտակրու-

<sup>8</sup> ՔՄ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց՝ Լ. Խաչիկյանը, Երևան, 1950, էջ 424:

<sup>9</sup> Ա. Սեդրակյան, նշվ. աշխ., էջ 86:

<sup>10</sup> II. Шопен. Исторические памятники Армянской области, СПб., 1852, с. 324.

<sup>11</sup> Մատենադարան, ձեռ. № 3817, էջ 330ա:

<sup>12</sup> Մ. Ամբաստան, նկարագիր սուրբ Կարապետի վանքից Երնջակա և շրջակայից նորա, Տփլիս, 1904, էջ 116:

թեամբ, և յուրվ ծախիւր... և վերակացու ժողովրդեան էր վարպետ կողմասն»<sup>13</sup>:

Ս. Աստվածածին եկեղեցու կառուցման և վերանորոգումների մասին մեզ հավաստի և կարևոր տեղեկություններ են տալիս նրա վիմագրերը, եկեղեցու հարավային մուտքի քա-

ինչպես Ա. Սեդրակյանի, այնպէս էլ Ղ. Ալիշանի տարակուսանքները տեղին են. քանի որ և՛ առաջինի, և՛ Քեսղների ուշադրութիւնից վրիպել են այդ արձանագրութեան տառերի հնագիտական տվյալները. այլապես նրանք նկատած կլինեին. որ այդ արձանագրութեան մեջ



Նկ. 1. Ս. Աստվածածին եկեղեցին:

րավորը, որը մի միակտոր քար է, կրում է եկեղեցու շինարարական արձանագրութիւնը: Այս մուտքի բարավորի վիմագիրը կազմված է երկու արձանագրութիւնից (նկ. 2), որոնցից առաջինը մեկ տողանոց է, իսկ երկրորդը՝ երեք: Առաջին արձանագրութիւնը, որը քանակված է բարավորի մեջտեղում, հետեյալն է.

ԶԻՄՆԱՐԿԵՑԱԻ Ս(ՈՒՐ)Բ ՅԵԿԵՂԵՑԻՍ  
Ի Ք(ՎԻՆ) Ն (951) ՀԱՅՈՅ. ՌԻԱ (1572)

Ա. Սեդրակյանն անդրադառնալով այս արձանագրութեան տարեթիւին նշել է, որ «ինձ իսպառ անհավանելի է՝ որ այսքան վսեմ և մեծածախ փառավոր հարկ մի մօտ ժամանակի գործ լինի. գուցե արձանագիրն վերջին ժամանակաց գործ լինելով՝ անգիտութեամբ այն թվականին տված է շինութիւնն»<sup>14</sup>: Ղ. Ալիշանը ևս տարակուսանքով նշել է, որ «քննողն և նկարող գերմանացին (Քեսղեակը) հնադույն քան դժվականդ ես համարի դշինվածն, հիացյալ ընդ մեծութիւնն և ընդ շքեղութիւնն»<sup>15</sup>:

«ՀԱՅՈՅ» քառից հետո կետ է դրված, իսկ «ՌԻԱ» տարեթիւը, որը Ա. Սեդրակյանը վերծանել է «ՌԻԱ»<sup>16</sup>, հետագա շրջանում կատարված: Հավելում է: Որպես արձանագրութեան շարունակութիւն քանդակված «ՌԻԱ» տարեթիւն տառերն ակնառու կերպով տարբերվում են բուն արձանագրութեան տառերի ինչպես փորագրման, այնպես էլ գծագրման եղանակից, նրանց համաչափութիւնից (բարձրութիւն, լայնութիւն): Հետևապես պետք է ընդունել, որ «ՌԻԱ» տարեթիւը բուն արձանագրութեանը շի վերաբերում, այլ եկեղեցու 1572 թ. նորոգման ժամանակ նախկինում գրված արձանագրութեանը կցված հավելում է: Այդ փաստի օգտին է խոսում նաև այն հանգամանքը, որ հենց այժմուտքի բարավորից վերև եի վերոյ արձանագրութեանս կա և այլ գրված, որը վերջն միայն երևի և թիվն 1572. Ի մեա... Էծախ սուր յեկեղեցիս ի թվ. Հայոց ՌԻԱ»<sup>17</sup>: Այստեղ Ղ. Ալիշանի մեջբերած արձանագրութեան մուտքի կամարի տակ ագուցված քանդակի կամ խաչքարի վրա է կղել և այժմ տեղում շկա:

<sup>13</sup> Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 368.  
<sup>14</sup> Ա. Սեդրակյան, նշվ. աշխ., էջ 85.  
<sup>15</sup> Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 367.

<sup>16</sup> Ա. Սեդրակյան, նշվ. աշխ., էջ 85:  
<sup>17</sup> Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 367:

Անդրադանայով ս. Աստվածածին եկեղեցու հարավային մուտքի բարավորի բուն արձանագրությանը, նկատենք, որ Ա. Սեղրակյանն այն վերծանելիս որպես տարեթիվ ընդունել է հետազայում հավելված «ՌԻԱ»-ն, իսկ «ԹՎ Ն ՀԱՅՈՅ»-ն ընդօրինակել է որպես «ԹՎ. ՀԱՅՈՅ»:

Գեղեցիկ է նաև ս. Աստվածածնի գավիթը (նկ. 3), որը կցված է եկեղեցու արևմտյան ճակատին և նրա ընդլայնական երկարությունից մի քիչ փոքր է: Վերջինիս կառուցման ժամանակի և նորոգումների մասին տեղեկություններ չկան: Այն շորս մույթերի հորինված-

ՀԻՄՆԱԿԵՑԱԻՄԹՅԵԿԵԼԵՑԻՍԻՊԸՆԷԱՅՈՅ. ՌԻԱ:  
ԵՍ ՆՈՐԱ ՇԵՆՑԻ ՄԱՐԿՈՍԱՓՈՄՈՎՍ  
ԻՄՅՕԺԱՐԿԱԿԱ ՍԺ ԽԱԿԱՆԱԻՉՎԱՆ  
ՎԱԽԻՄԱՐԿԱՅԱԾՆՅԵԿԵԼԵՑՈՆ ԴԵՆՈՃԻՆ

նկ. 2. Ս. Աստվածածին եկեղեցու հարավային մուտքի բարավորի արձանագրությունների գրչանկարները:

Մեր ուսումնասիրությունները թույլ են տալիս այս արձանագրության ն տառը, որի վրա դրված է նաև համառոտագրման ճիշտանվոր նշան, վերծանել որպես բուն արձանագրության տարեթիվ: Այսպիսով պարզվում է, որ ս. Աստվածածինը հիմնարկվել է 951 թ.: 1661 թ. այս արձանագրության տակ, որպես շարունակություն, քանդակվել է նորաշենցի Մարկոս Ափոմսվի հետևյալ նվիրատվական արձանագրությունը.

- 1 ԵՍ ՆՈՐԱՇԵՆՑԻ ՄԱՐԿՈՍ ԱՓՈՒՄՈՎՍ
- 2 ԻՄ 9ՕԺԱՐ ԿԱՄԱԻՍ Ժ ԽԱԿԱՆ ՆԱԽԾՎԱՆ
- 3 ՎԱԽԻՄ ԱՐԻ Ա(ՍՏՈՒԱ)ԾԱԾԻՆ 9ԵԿԵՂԵՑՈՆ ԹՎ(Ի)Ն ՌԺԺ (1661) ԻՆ18

Եկեղեցու արևմտյան մուտքն ունի քանդակազարդ և բարձր կամար: Բարավորի վրա, որը դարձյալ մի միակտոր բազալտե մեծ քար է, քանդակված է հետևյալ արձանագրությունը.

Շ(Ի)Շ(Ա)Տ(Ա)Կ Է ԴՈՒՌՍ ՄԱՀՏԵՍԻ ԱՔԱՆԷՍԻ ՈՐԴԻ ՂԱԶԱՐԻՆ

Բարավորից վերև ագուցված են ՄՄԻ դ. երեք փոքրիկ գեղաքանդակ խաչքարեր, որոնցից երկուսն ունեն արձանագրություններ<sup>19</sup>:

<sup>18</sup> Որոշ տարեթիվներում տե՛ս Ա. Ս ե դր ա կ յ տ ն, նշվ. աշխ., էջ 85, Ղ. Ա լ ի շ ա ն, նշվ. աշխ., էջ 367:

<sup>19</sup> Այս, ինչպես նաև բարավորի արձանագրությունները տե՛ս նաև Ա. Ս ե դր ա կ յ ա ն, նշվ. աշխ., էջ 84, Ղ. Ա լ ի շ ա ն, նշվ. աշխ., էջ 367:

քով գավիթ-սրահ է, որը կառուցված է եկեղեցու կարմիրանգ սրբատաշ քարերով և ներդաշնակ է նրա հետ: Կարելի է ենթադրել, որ այս գավիթ-սրահը կառուցվել է 1572 թ. կամ էլ արդյունք է ՄՄԻ դ. եկեղեցու վերանորոգման: Նորաշենի ս. Աստվածածին եկեղեցու գավիթ-սրահի ինչպես արևմտյան ճակատը, այնպես էլ հյուսիսային ու հարավային ճակատները կամարակապ բացվածքներ են: Շինության շորս հաստահողույս մույթերի թաղակիր կամարները նստած են եկեղեցու արևմտյան ճակատին կցված մույթերի վրա:

Նորաշենի ս. Աստվածածին եկեղեցու գավիթ-սրահի մույթերի արևմտյան ճակատներում, կամարների ուղղությամբ, տեղադրված են Աստվածամոր, շորս ավետարանիչների բարձրաքանդակները, որոնցից Մարկոսի և Ղուկասի քանդակներն այժմ խիստ քայքայված են:

Գավթի հյուսիսային մույթի արևմտյան ճակատի ձևավոր որմնախորշի մեջ պսակային մասում քանդակված է մի բարձրաքանդակ խաչ, որից ներքև Մաթեոս ավետարանիչի տեղ-տեղ վնասված բարձրաքանդակն է: Ավետարանիչի քանդակի տակ փորագրված է.

Ս(ՈՒՐ)Բ ՄԱՏԹԷՈՍ

Այս որմնախորշի անմիջապես տակ տեղադրված քարի վրա բարձրաքանդակի պատվիրատուի հետևյալ հիշատակագիրն է.

- 1 Յ(Ի)Շ(Ա)Տ(Ա)Կ Է Ս(ՈՒ)ՐԲ Պ(Ա)Տ-Կ(Ե)ՐՍ. ՄԱՐ
- 2 ԿԱՐԻ ՈՐԴԻ ՕՎԱՆԷՍ,
- 3 ՎԱՐԴԱՊԵՏԻՍ

Ինչպես Ա. Սեղրակյանը, այնպես էլ Ղ. Ալիշանը նորաշենցի Հովհաննես վարդապետի հոր

անուն կարդացել են Մարկոս-Ս, որ ճիշտ չէ: Իսկ հաստատվում է նաև եկեղեցու արևելյան ճակատի արտիդի լուսամուտից հարավ տեղադրված նորահայտ արձանագրությամբ, որի մեջ ևս Հովհաննեսի հոր անունը նշված է Մարգար: Այդ խորաքանդակ խաչքարի խաչի

Գավթի հարավային մույթի որմնախորշի պսակի խաչի քանդակից ներքև տեղադրված է Ավետարանը ձեռքին բռնած Հովհաննես ավետարանիչի բարձրաքանդակը: Ավետարանիչի գլխի բարձրությամբ, երկու կողմերում քանդակված է:



Նկ. 3. Ս. Աստվածածին եկեղեցու գավթ-սրահը:

տակ, հարթ մասում, երկու տողով քանդակված է.

1 Ս(ՈՒՐ)Ր Խ(Ա)ՉՍ Յ(Ի)Շ(Ա)Տ(Ա)Կ է  
2 ՄԱՐԳԱՐԻ ՈՐԳԻ ՈՎԱՆԻՍԻՆ

Վիճաբանական այս ստույգ տեղեկությունները մեկ անգամ ևս հաստատվում են Հովհաննես վարդապետի ձեռքով 1697 թ. գրված Ավետարանի հիշատակարանով: Այնտեղ կարդում ենք. «Արդ՝ ես ... Հովհաննես վարդապետս՝ որ եմ յերկրաւ յերնչակցի. նաեւ ի հայրենի գեղչէն նորաշինեկցի: Դարձեայ ստացայ ի հալալ ընչից իմոց Զյանտարանս այս որ է... դարձեայ ետու յիշատակ եւ ի վայելումն Շատիկու սր յանապատին, որ մակ անուամբ վերակոչի սր սիոն... աղաչեմ... յիշեցեք... նաեւ ի ծնողքն Զմարգ(ա)րէն. եւ ղեաթունն... գրեցաւ ի թուագործութեան մերս ՌՃԽԶ երորդին»<sup>21</sup>:

20 Ա. Ս ե դ ր ա կ յ ա ն, նշվ. աշխ., էջ 85, Ղ. Ա լ ի շ ա ն, նշվ. աշխ., էջ 368:

21 «Ցուցակ հայերեն ձեռագրաց Թարիզի», կազմեց՝ Հ. Ա ճ ա ո յ ա ն, Վիեննա, 1910, էջ 27:

[ՍՐ 2] (Ո)ՎՀԱՆՆՍ

Որմնախորշի տակ տեղադրված է բարձրաքանդակի պատվիրատուի նետկալ արձանագրությունը.

1 Յ(Ի)Շ(Ա)Տ(Ա)Կ է Ս(ՈՒՐ)Ր Խ(Ա)ՉՍ.  
ՈՂ  
2 ԱՆԻՆ. ԿՈՂԱԿՑԻՆ  
3 ՆԱԶԼՈՒԻՆ.<sup>22</sup>

Կարելի է ենթադրել, որ վերոհիշյալ Ոհանը Հովհաննես վարդապետի եղբայրն է, որը հիշատակվում է վերը նշված հիշատակարանում՝ մինչև 1697 թ. Հովհաննես վարդապետի մահացած եղբայրների թվում: Հավանական է նաև այն, որ Հովհաննես վարդապետի եղբորորդու՝ նորաշինի. նշանավոր գրիչ Ալեքսանի, 1669 թ. այս վանքում գրազգրած Ավետարանում հիշատակվող Հովհան վարդապետը վերը նշված արձանագրության Ոհանը լինի<sup>23</sup>:

22 Որոշ տարբերություններով տե՛ս նաև Ա. Ս ե դ ր ա կ յ ա ն, նշվ. աշխ., էջ 85, Ղ. Ա լ ի շ ա ն, նշվ. աշխ., էջ 368:  
23 Մատենադարան, ձեռ. № 8253, էջ 325ա:

Գավթի միջին մույթի որմնախորշում տեղադրված Մարկոսի բանդակը հողմահարված և բայթաված է: Ավետարանիչի գլխի երկու կողմերում վիմագրված է:

Ս(ՈՒՐ)Ո ՄԱՐԿ(Ո)Ս

Գավթի միջին բացվածքի կամարի մեջտեղում, որմնախորշի մեջ ազուցված է նաև Աստվածամոր պատկերաբանդակը՝ մանուկ Հիսուսը դրկին: Այո բանդակը, որը հողմահարված է, դեղեցիկ և արտահայտիչ տեսք ունի: Աստվածամոր բանդակից թիչ վերև՝ գավթի ծածկի վրա, կանգնեցված է մի գմբեթի մանրաբանդակ: Նշված բանդակներից բացի, նորաշինի ս. Աստվածածնի դավթ-արահի այլ մասերում բանդակներ ու խաչեր: Աչքի առաջ ունենալով բանդակների կառուցման և պատկերագրման տվյալները, ինչպես նաև պատվիրատուների (Հովհաննես և Ոհան վարդապետներ) ապրած ժամանակաշրջանը, վստահորեն կարելի է ասել, որ ս. Աստվածածնի գավթի վերը նշված բանդակներն արվել են 1660-ական թվականներին:

Ս. Աստվածածին եկեղեցու արևմտյան և հարավային կողմերում կառուցված են եղել վանքապատկան շինություններ ու խցեր, որոնք ավերակների են վերածվել դեռևս XIX դ. վերջերին: Ըկեղեցու արևելյան կողմում գտնվում են վանքի աղբյուրի և այլ շինությունների ավերակ հետքեր: Աղբյուրը եղել է վանքի պարսպից ներս և ունեցել է թաղակապ ծածկ ու երկու ավազան:

Ս. Աստվածածին եկեղեցու արևմտյան կող-

մում, նրանից մոտ 350—400 մ հեռու, լեռնալանջի թեքադիր փեղին գտնվում է նորաշին գյուղի գերեզմանատունը: Այն բավական ընդարձակ է և ունի ավելի քան 800 տապանաբար (XV—XX դդ.):

Նորաշինի հուշարձանների թվում աչքի է ընկել նաև գյուղի դիմաց, Երնջակ գետի վրա կառուցված կամուրջը, որից այժմ միայն նշմարվում են ավերակ խելերի աննշան հետքերը: Այս կամուրջը, ինչպես նշել է Ա. Սեդրակյանը, կառուցված է եղել կոփածո քարերով և 1871 թ. օգոստոսին հեղեղից ավերվել է: Ըստ Մ. Սմբատյանի, կամուրջը 1663 թ. կառուցել են նորաշինցի Հանես և Մկրտիչ հղբայրները<sup>25</sup>: Կամրջի խելերի և կամարի զգալի մասը տեսանելի են եղել մինչև 1930-ական թվականները: Այս կամրջին կից ոչինչված էին Կարվանսարա՝ տեղի բնակության ճանապարհորդաց, մարդոց և անասնոց, ինչպես Ջուզայի կամրջինը<sup>26</sup>:

Այսպիսով, նորաշինի պատմաճարտարապետական հուշարձանների և նյութական մշակույթի այլևայլ մնացորդները՝ ուսումնասիրությունը հավաստում է, որ հին հայկական այս բնակատեղին դեռևս X դ. սկսած ապրել է մշակութային բուռն կյանքով և Երնջակ գավառի կարևոր հոգևոր կենտրոններից մեկն է եղել:

24 Ա. Սեդրակյան, նշվ. աշխ., էջ 87:  
25 Մ. Սմբատյան, նշվ. աշխ., էջ 116:  
26 Նույն տեղում: